պարտաւոր ենք օգտուել գիտնալ։ Մարդ արարածը իր ծնած օրէն իսկ կեանքի զանազան շրջաններուն կատարելիք եւ ամբողջացնելիք պարտականուԹիւններ ունի նախ՝ իր անձին ապա նաեւ ընկերային շրջանակին համար։

2020 Թուականի վերջացող օրերու հուսկ պատգամն է կարեւոր դաս մը առնել մեր անցեալի օրերէն չկրկնելու մեր գործած սխալները, որոնք երբեմն կրնան ճակատագրական ըլլալ եւ անսրբագրելի, որոնց վրայ ետքը ողբալը այլեւս իմաստ պիտի չունենար։

Իսկ այս տարի, 2021-ի մեզի բերած պատգամն է, դրական, վառ ու լաւ յոյսերով դիմաւորել բացուող Նոր Տարին, լաւ տրամադրուԹեամբ ու խանդավառ հոգիով բարի գալուստ մաղԹել անյայտին՝ 2021 Թուականին, խնդրելով Աստուծմէ, որ մեզի եւս տայ դրական ու համբերող ոգի՝ հաշտուելու եւ համագործակցելու անյայտին՝ Ամանորին հետ։

ՇՆՈԲՀԱՒՈԲ ՆՈԲ ՏԱԲԻ

ъ.Ц.Г.

ԲԱՐԻՔ ԳՈՐԾԷ՛ ԵՒ ՋՈՒՐԸ ՆԵՏԷ

Փոքրիկ, որբ տղայ մը, ձեռքը կողով մը հաւկիթ, շուկայ կը տանէր ծախելու, յանկարծ ճամբան կ'իյնայ ու բոլոր հաւկիթները կոտրուելէ զատ, ինք ալ ֆիզիքապէս կը վնասուի։ Անկասկած մարդ մը, իսկոյն կը վերցնէ տղեկը գետնէն եւ հիւանդանոց մը տանելով պէտք եղած բուժումը ընել կու տայ, կը վճարէ կոտրած հաւկիթներուն գինը, ուրախացնելով անոք երեխան։

Խեղճ տղեկը չափազանց զարմացած այդ անծանօ**թին իրեն ցոյց տուած անակըն**կալ օգնութենէն, կը հարցնէ անծանօթ մարդուն,

- Դուն ո՞վ ես, Յիսո՞ւսն ես։

Մարդը կը պատասխանէ.

- Ո՜չ, ես սովորական մարդ մրն եմ։

Տղեկը կ'ըսէ.

- Դուն չես կրնար սովորական մէկը ըլլալ, որովհետեւ մայրս կ'ըսէր, Թէ Յիսուս միշտ մարդոց մէջ կը պտտի եւ իր շուրջ բարիքներ կը սփռէ, ահաւասիկ դուն ճիշդ իմ մօրս նկարագրած Յիսուսն ես։

Հայր Աստուած մեզմէ իւրաքանչիւրին անպայմանօրէն տուած է այդ բարիք գործելու յատկութիւնը, եւ Ամանորը, մանաւանդ այս 2021 թուականին, երբ Քորոնան միլիոնաւոր մարդկային կեանքեր խլեց եւ խախտեց այս աշխարհի բնականոն կեանքը, մեզմէ կ՚ակնկալուի որ օգնութեան ձեռք երկարենք անկարներուն եւ փորձենք մխիթարել սգաւորները մեր կարելիութեան սահմաններուն մէջ։